Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-232[33]-11.04.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.1-ին հոդվածով.

«Հոդված 18.1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի մասնագիտական ստաժը

1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի մասնագիտական ստաժը ներառում է նաև դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի պետի և հետաքննություն իրականացնող աշխատակցի (հետաքննիչի) պաշտոն զբաղեցնելու ստաժը:»:

Հոդված 3. Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասում «նյութերի նախապատրաստման կամ քրեական գործի քննության» բառերը փոխարինել «քրեական վարույթի» բառերով:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցները՝ ոստիկանության հետաքննության բաժնի, բաժանմունքի խմբի տեսուչները, արտակարգ իրավիճակների նախարարության, ռազմական ոստիկանության, քրեակատարողական ծառայության հետաքննիչի պաշտոնի նշանակված անձինք, նշված ստորաբաժանումների ղեկավարները, որոնց զբաղեցրած հաստիքները «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելու ուժով ենթակա են կրճատման և տեղափոխման քննչական կոմիտեի հաստիքացուցակ՝ որպես ինքնավար պաշտոն, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնում նշանակվելու համար «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը, դիմում են քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողով՝ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու նպատակով:

3. Օրենքի 17-րդ հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված պահանջներին համապատասխանող՝ հետաքննության մարմնի աշխատակիցներին՝ ոստիկանության հետաքննության բաժնի, բաժանմունքի, խմբի տեսուչներին, արտակարգ իրավիճակների նախարարության, ռազմական ոստիկանության, քրեակատարողական ծառայության հետաքննիչի, նշված ստորաբաժանումների ղեկավարի պաշտոնի նշանակված անձանց, որակավորման հանձնաժողովն առանց որակավորման ստուգում անցկացնելու ընդգրկում է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում, որոնք առանց արդարադատության ակադեմիայում ուսումնառություն անցնելու քննչական կոմիտեի նախագահի կողմից մեկամսյա ժամկետում նշանակվում են որպես պաշտոնակատար՝ մեկ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձինք «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ պաշտոնակատար նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում, Օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է անցնեն որակավորման ստուգում:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում որակավորման ստուգման արդյունքում քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք ազատվում են արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից:

6. Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պաշտոնի նշանակված անձինք ազատվում են պաշտոնակատարի պաշտոնից, եթե պաշտոնակատար նշանակվելու պահից մեկ տարվա ընթացքում.

1) չեն դիմել որակավորման ստուգում անցնելու համար և լրացել է նրանց պաշտոնավարման մեկ տարին, կամ

2) դիմել են որակավորման ստուգում անցնելու համար, սակայն որակավորման ստուգման արդյունքում չեն ընդգրկվել քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում, կամ

3) որակավորման ստուգման արդյունքում ընդգրկվել են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում և քննչական կոմիտեի նախագահի կողմից նշանակվել համապատասխան պաշտոնի:

7. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ ավելացված հաստիքների՝ սույն հոդվածով սահմանված կարգով համալրումը ավարտելուց հետո քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնի նշանակված անձանց առաջխաղացման ցուցակում ընդգրկելը և պաշտոնում նշանակելը կատարվում են Օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Պաշտոնակատար նշանակված անձն իր դիմումով կամ քննչական կոմիտեի նախագահի կամ նրա տեղակալի միջնորդությամբ կարող է ընդգրկվել Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակում՝ բանավոր հարցազրույցի արդյունքում՝ որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

8. Սույն հոդվածով նախատեսված անձինք պահպանում են հետաքննության մարմնում ծառայություն իրականացնելու ընթացքում չօգտագործված ամենամյա արձակուրդի համար դրամական հատուցում ստանալու իրավունքը:

9. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձանց քննչական կոմիտեում պաշտոնակատար նշանակելիս ոստիկանության հետաքննության բաժնի, բաժանմունքի, խմբի տեսուչի, արտակարգ

իրավիճակների նախարարության, ռազմական ոստիկանության, քրեակատարողական ծառայության հետաքննիչի, նշված ստորաբաժանումների ղեկավարի պաշտոն զբաղեցնելու նրանց ունեցած ստաժը հաշվարկվում է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելու ստաժում:

10. Եթե քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնակատար նշանակվելու պահին սույն հոդվածով նախատեսված անձինք ունեն հետաքննության մարմնի աշխատակցի առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ, նրանց՝ քննչական կոմիտեում ծառայության ժամանակահատվածը հաշվարկվում է զինվորական կենսաթոշակի իրավունքը ծագելու համար անհրաժեշտ ժամկետի մեջ:

11. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալուց հետո քննչական կոմիտեում հետագա ծառայության ժամանակահատվածի, ինչպես նաև քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնակատար նշանակվելու պահին հետաքննության մարմնի աշխատակցի առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ չունեցող անձանց՝ քննչական կոմիտեում ծառայության ժամանակահատվածի նկատմամբ կիրառելի են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կենսաթոշակային ապահովության վերաբերյալ ընդհանուր կանոնները:

12. Սույն հոդվածով նախատեսված կանոնների կիրառման արդյունքում տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող՝ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն ունի մեկ կենսաթոշակ ստանալու իրավունք՝ իր ընտրությամբ:

13. Սույն հոդվածի կարգավորումները վերաբերելի են նաև ՀՀ ռազմական ոստիկանությունում հետաքննիչի պաշտոնի նշանակված այն անձանց, որոնց հաստիքները կրճատվել են սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող 3 ամսվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Կ-232[8]-11.04.2022-ՊԻ-011/1) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջին ընթերցում

Կ-232[33]-11.04.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. ~~Օրենքի 20-րդ հոդվածը~~Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ ~~7~~18.1-ին ~~մասով~~հոդվածով.

~~«7~~**«Հոդված 18.1. Քննչական կոմիտեում** ~~թափուր պաշտոնի համար կարող~~**ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի մասնագիտական ստաժը**

1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի մասնագիտական ստաժը ներառում է ~~նշանակվել պաշտոնակատար, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով~~նաև դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի պետի և հետաքննություն իրականացնող աշխատակցի (հետաքննիչի) պաշտոն զբաղեցնելու ստաժը:»:

Հոդված 3. Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասում «նյութերի նախապատրաստման կամ քրեական գործի քննության» բառերը փոխարինել «քրեական վարույթի» բառերով:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը~~, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մայիսի 1-ից~~:

~~1. Սույն օրենքի 2-րդ հոդվածը գործում է մեկ տարի ժամկետով:~~

~~**Հոդված 5. Անցումային դրույթներ**~~

2. ~~Հետաքննության մարմնի աշխատակիցները~~Հետաքննության մարմնի աշխատակիցները՝ ոստիկանության հետաքննության բաժնի, բաժանմունքի խմբի տեսուչները, արտակարգ իրավիճակների նախարարության, ռազմական ոստիկանության, քրեակատարողական ծառայության հետաքննիչի պաշտոնի նշանակված անձինք, նշված ստորաբաժանումների ղեկավարները, որոնց զբաղեցրած հաստիքները «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելու ուժով ենթակա են կրճատման և տեղափոխման քննչական կոմիտեի հաստիքացուցակ՝ որպես ինքնավար պաշտոն, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնում նշանակվելու համար «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց ~~առնվազն մեկ ամիս առաջ~~հետո՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը, դիմում են քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողով՝ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու նպատակով:

3. Օրենքի 17-~~-~~րդ ~~հոդվածով~~հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված պահանջներին ~~բավարարող~~համապատասխանող՝ հետաքննության մարմնի աշխատակիցներին՝ ոստիկանության հետաքննության բաժնի, բաժանմունքի, խմբի տեսուչներին, արտակարգ իրավիճակների նախարարության, ռազմական ոստիկանության, քրեակատարողական ծառայության հետաքննիչի, նշված ստորաբաժանումների ղեկավարի պաշտոնի նշանակված անձանց, որակավորման հանձնաժողովն ~~արտամրցութային կարգով~~առանց որակավորման ստուգում անցկացնելու ընդգրկում է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում, որոնք առանց արդարադատության

ակադեմիայում ուսումնառություն անցնելու քննչական կոմիտեի նախագահի կողմից մեկամսյա ժամկետում նշանակվում են որպես պաշտոնակատար՝ մեկ տարի ժամկետով:

~~1. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց քննչական կոմիտեի նախագահը «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, նշանակում է սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ պաշտոնակատար:~~

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձինք «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ պաշտոնակատար նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում, Օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է անցնեն որակավորման ստուգում:

5. ~~Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված և~~ Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում որակավորման ստուգման արդյունքում քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք ազատվում են արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից~~ ազատված՝ սույն~~:

~~5.~~6. Սույն հոդվածի 3-րդ ~~մասով նախատեսված անձինք քննչական կոմիտեի նախագահի կողմից համապատասխան~~մասի համաձայն՝ պաշտոնի ~~նշանակվելու դեպքում~~նշանակված անձինք ազատվում են պաշտոնակատարի պաշտոնից~~:~~, եթե պաշտոնակատար նշանակվելու պահից մեկ տարվա ընթացքում.

~~Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձինք, որոնց վերաբերյալ~~1) չեն դիմել որակավորման ~~հանձնաժողովը տվել~~ստուգում անցնելու համար և լրացել է ~~դրական եզրակացություն, և որոնք պետք է ուսումնառություն անցնեն արդարադատության ակադեմիայում, պաշտոնակատարի պաշտոնից ազատվում~~նրանց պաշտոնավարման մեկ տարին, կամ

2) դիմել են ~~արդարադատության ակադեմիայում ուսումնառություն չանցնելու կամ~~ որակավորման ~~քննությունը չհանձնելու, ինչպես նաև~~ստուգում անցնելու համար, սակայն որակավորման ստուգման արդյունքում չեն ընդգրկվել քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում, կամ~~ 5.~~

3) որակավորման ստուգման արդյունքում ընդգրկվել են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում և քննչական կոմիտեի նախագահի կողմից նշանակվել համապատասխան պաշտոնի~~ նշանակվելու դեպքում:~~:

7. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ ավելացված հաստիքների՝ սույն հոդվածով սահմանված կարգով համալրումը ավարտելուց հետո քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնի նշանակված անձանց առաջխաղացման ցուցակում ~~ընդգրկված թեկնածուների նշանակումը~~ընդգրկելը և պաշտոնում նշանակելը կատարվում ~~է~~են Օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Պաշտոնակատար նշանակված անձն իր դիմումով կամ քննչական կոմիտեի նախագահի կամ նրա տեղակալի միջնորդությամբ կարող է ընդգրկվել Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակում՝ բանավոր հարցազրույցի արդյունքում՝ որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

8. Սույն հոդվածով նախատեսված անձինք պահպանում են հետաքննության մարմնում ծառայություն իրականացնելու ընթացքում չօգտագործված ամենամյա արձակուրդի համար դրամական հատուցում ստանալու իրավունքը:

9. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձանց քննչական կոմիտեում պաշտոնակատար նշանակելիս ոստիկանության հետաքննության բաժնի, բաժանմունքի, խմբի տեսուչի, արտակարգ իրավիճակների նախարարության, ռազմական ոստիկանության, բրեակատարողական ծառայության հետաքննիչի, նշված ստորաբաժանումների ղեկավարի պաշտոն զբաղեցնելու նրանց ունեցած ստաժը հաշվարկվում է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելու ստաժում:

~~9.~~10. Եթե քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնակատար նշանակվելու պահին սույն հոդվածով նախատեսված անձինք ունեն հետաքննության մարմնի աշխատակցի առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ, նրանց՝ քննչական կոմիտեում ծառայության ժամանակահատվածը հաշվարկվում է զինվորական կենսաթոշակի իրավունքը ծագելու համար անհրաժեշտ ժամկետի մեջ:

~~10.~~11. ~~10.~~ Սույն հոդվածի ~~9~~3-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալուց հետո քննչական կոմիտեում հետագա ծառայության ժամանակահատվածի, ինչպես նաև քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնակատար նշանակվելու պահին հետաքննության մարմնի աշխատակցի առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ չունեցող անձանց՝ քննչական կոմիտեում ծառայության ժամանակահատվածի նկատմամբ կիրառելի են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կենսաթոշակային ապահովության վերաբերյալ ընդհանուր կանոնները:

12. Սույն հոդվածով նախատեսված կանոնների կիրառման արդյունքում տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող՝ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն ունի մեկ կենսաթոշակ ստանալու իրավունք՝ իր ընտրությամբ:

13. Սույն հոդվածի կարգավորումները վերաբերելի են նաև << ռազմական ոստիկանությունում հետաքննիչի պաշտոնի նշանակված այն անձանց, որոնց հաստիքները կրճատվել են սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող 3 ամսվա ընթացքում: